«Ռուս-Հայկական Համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝
Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան
№ 9 «15» Դեկտեմբեր 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն ՝ 042101.00.7 Իրավագիտություն (առկա ուսուցում)

Կրթական ծրագիր՝042101.04.7 Քրեական իրավունք և դատավարություն

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

042101.04.7 «Քրեական իրավունք և դատավարություն» կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից 042101.00.7 «Իրավագիտություն»:

Մագիստրոսական կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 2 տարի:

Մագիստրոսական կրթական ծրագրի ծավալը կազմում է 120 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

«Իրավագիտության» մագիստրոսի որակավորում շնորհվում է այն շրջանավարտներին, որոնք ունեն խոր և մասնագիտացված գիտելիքներ, հմտություններ, ինչպես նաև կարողություններ՝ իրավագիտության ոլորտում մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումը շարունակելու համար:

«Քրեական իրավունք և դատավարություն» մագիստրոսական ծրագրի արդիականությունը պայմանավորված է պետության կողմից օրինականության և իրավակարգի պատշաճ պահպանման, մարդու և քաղաքացու իրավունքների, ազատությունների, օրինական շահերի, սեփականության, կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի, հասարակական կարգի և անվտանգության պատշաճ քրեաիրավական պաշտպանության իրականացման անհրաժեշտությամբ:

Մագիստրոսական ծրագրի արդիականությունը թելադրված է նաև հանցավորության կանխարգելման միաժամանակյա իրականացման, ինչպես նաև քրեական դատավարության պատշաճ գործունեության ապահովման անհրաժեշտությամբ՝ անհատի իրավունքների և ազատությունների պահպանման համատեքստում:

Այս մագիստրոսական ծրագրի **առանձնահատկությունն** այն է, որ այն համատեղում է ինչպես քրեաիրավական, քրեաբանական, այնպես էլ քրեադատավարական գիտության արդիական հարցերի շրջանակը, ինչը նպաստում է ուսանողների շրջանում մասնագիտական գործունեության իրականացման համար անհրաժեշտ համապարփակ գիտելիքների և հմտությունների ձևավորմանը: «Քրեական իրավունք և դատավարություն» համապարփակ մագիստրոսական ծրագիր հիմնված է նյութական և դատավարական իրավունքի նորմերի անքակտելի միասնության և դրանց փոխադարձ ազդեցության վրա:

Մագիստրոսական ծրագրի **նպատակն է**՝ ընդլայնել, խորացնել և կատարելագործել ուսանողների տեսական գիտելիքները ժամանակակից քրեական իրավունքի, քրեաբանության, քրեական դատավարության իրավունքի, քրեագիտության, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսության և պրակտիկայի արդի հիմնախնդիրների վերաբերյալ, պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք ունակ են հմտորեն մեկնաբանել և կիրառել քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի նորմերը իրավական գործունեության հատուկ ոլորտներում:

Մագիստրոսական ծրագրի **հիմնական խնդիրները**.

- ուսումնասիրել և վերլուծել ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսդրության հիմնադրույթները;
- ձեռք բերել խորացված գիտելիքներ հանցագործությունների որակման խնդիրների վերաբերյալ;

- հաշվի առնելով վերհանված խնդիրներն ու օրենսդրական կարգավորման բացերը ՝ բացահաըտել ՀՀ քրեաիրավական և քրեադատավարական քաղաքականության զարգացման հիմնական ուղղություններն ու միտումները;
- ուսումնասիրել և վերլուծել քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ոլորտում իրավակիրառ պրակտիկայի վիճակն ու միտումները և վեր հանել առկա խնդիրները;
- ուսումնասիրել հանցավորության կանխարգելման իրավական և մեթոդաբանական հիմքերը:

Այս մագիստրոսական ծրագրի շրջանավարտները պահանջված են դատական համակարգում, ՀՀ դատախազությունում, ՀՀ Քննչական կոմիտեում, ՀՀ պրոբացիայի ծառայությունում, ՀՀ քրեակատարողական ծառայությունում և այլ կառույցներում:

2.2. Մագիստրոսական կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ ՝

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝
  - Գիտահետազոտական աշխատանք
- Արտադրական պրակտիկայի ձևերը՝
  - Գիտահետազոտական պրակտիկա
  - Մասնագիտական պրակտիկա
  - Գիտամանկավարժական պրակտիկա
  - Գիտահետազոտակա սեմինար
  - Նախադիպլոմային պրակտիկա

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝

- Մագիստրոսական թեզի պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրավագիտության մագիստրոսի աստիճանի հավակնորդը պետք է ունենա՝

Գիտելիքները՝

1) Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության, էության և կիրառման գործընթացի վերաբերյալ մասնագիտական խոր, համակարգված և համակողմանի տեսական և գործնական գիտելիք, այդ թվում՝ միջգիտակարգային և իրավահամեմատական համատեքստում:
2) Գիտական հետազոտությունների ընդհանուր և սոցիալ-իրավական մեթոդաբանության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք:
3) Իրավաընկալման հայեցակարգերի, Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի զարգացման եղանակների, ինչպես նաև՝ իրավագոյացման վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք:
4) խորը գիտելիքներ քրեական իրավունքի ընդհանուր մասի հայեցակարգային հարցերի, հանցագործությունների որակման խնդիրների, դատական և մինչդատական վարույթի խնդրահարույց հարցերի վերաբերյալ:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Կարող է ինքնուրույն և համակողմանիորեն կիրառել մասնագիտական գիտելիքները նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական իրավական հիմնախնդիրների լուծման համար:
2. Կարող է ինքնուրույն գտնել, դասակարգել և համակողմանի ու համակարգված մոտեցմամբ փաստարկված մեկնաբանել օրենսդրական կամ այլ տեղեկատվություն, այդ թվում՝ օտարալեզու, որն անհրաժեշտ է մասնագիտացման ոլորտում խնդրի լուծման համար:

3. Կարող է ինքնուրույն օգտագործել գիտական հետազոտության մեթոդներ՝ մասնագիտական գործունեություն ծավալելիս և անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելիս։
4. Կարող է ինքնուրույն կողմնորոշվել իր մասնագիտացման ոլորտի իրավական հիմնախնդիրները լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը։
5. Կարող է հետազոտական և նորարարական գործունեություն իրականացնելիս համակցել տարբեր ոլորտների գիտելիքներ և զարգացնել նոր գաղափարներ ու տեսակետներ։ Իրավաստեղծման և մեկնաբանման ժամանակ հասկանալ քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անձնային և հոգեբանական գործոնները։

Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ

1. Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը համակողմանիորեն և փաստարկվածկերպով ներկայացնել, բացատրել, ինչպես նաև՝ ստանալ իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ,բարդությանտարբերաստիճանի խնդիրներ և լուծումներ, առաջարկել օրինական, այդ թվում՝ այլընտրանքային լուծումներ։
2. Կարող է իր գործունեության ընթացքում արհեստավարժ կերպով կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ առանձին բարդություն ներկայացնող իրավական հիմնախնդիրների լուծումն ապահովելու, ինչպես նաև՝ հետազոտություն իրականացնելու համար։
3. Կարող է ինքնուրույն հավաքել, վերլուծել, գնահատել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող տվյալներ՝ արդյունավետորեն համադրելով առաջնային և երկրորդային աղբյուրները։

4. Կարող է հետևել մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին՝ պատասխանատվությամբ իրականացնելով իր մասնագիտական գործառույթները։

   Ընդհանրական իմացական կարողություններ

   Կարող է դրսևորել վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտացման ոլորտի, ինչպես նաև՝ հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարներիզ արգացման համար։

Կարողունակությունը՝

1. Ունակ է՝ ինքնուրույն ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն, ինչպես նաև գիտական ղեկավարման ներքո կատարելու անհրաժեշտ հետազոտություններ իրավագիտության ոլորտում։
2. Ունակ է՝աշխատելու թիմում և (կամ) ղեկավարելու այն։
3. Ունակ է՝ աշխատելու բազմամշակութային միջավայրում, արդյունավետ կերպով համագործակցելու սոցիալական տարբեր խմբերի և դրանց ներկայացուցիչների հետ, նպաստելու այլ անձանց իրավական զարգացմանը։
4. Ունակ է՝ բացահայտելու սեփական կրթական կարիքները և ինքնակրթվելու, ընտրելու մասնագիտական գործունեության զարգացման ուղին, պարբերաբար բարձրացնելու մասնագիտական որակավորումը, ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին, գործելու պատասխանատու և ազնվորեն։
5. Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար։

Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

իրավաստեղծ գործունեություն

- Քրեական իրավունքի, քրեական դատավարության իրավունքի նորմերի մշակում և իրականացում,
- Քրեական արդարադատության ոլորտում իրավական փաստաթղթերի կազմում:

իրավակիրառ գործունեություն

- Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի նորմերի մեկնաբանություն,
- Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի նորմերի կիրառում,
- Օրենսդրականն բացերի բացահայտում և վերացում,
- Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի նորմերի իրավակիրառ պրակտիկայում միատեսակ կիրառման բացակայության խնդրի վերհանում և վերացում,
- ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների իրացումը մասնագիտական գործունեության ընթացքում,
- աշխատանքային պարտականությունների շրջանակներում որոշումների հիմնավորում և ընդունում, ինչպես նաև քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի նորմերի իրականացման հետ կապված գործողությունների կատարում:

փորձագիտական-վերլուծական գործունեություն

- Քրեաիրավական և քրեադատավարական ոլորտում պետական քաղաքականության իրականացման վերլուծություն, օրենսդրական և իրավակիրառ բնույթի խնդիրների բացահայտում և դրա կատարելագործմանն ուղղված միջոցառումների մշակում,

- Նորմատիվ իրավական ակտերի վերլուծություն՝ դրանցում քրեածին, այդթվում՝ կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և դրանց վերացման նպատակով,
- Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքիբ նագավառում որակյալ փորձագիտական եզրակացությունների պատրաստում

<u>մանկավարժական գործունեություն</u>

- Քրեական իրավունքի, քրեաբանության և քրեական դատավարության իրավունքի առարկաներ դասավանդելու ունակություն տեսական բարձր մակարդակով:

<u>գիտահետազոտական գործունեություն</u>

- Քրեական իրավունքի, քրեաբանության և քրեական դատավարության իրավունքի բնագավառում իրավական խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտությունների իրականացում:

Կրթական ծրագրի պահանջարկը.

"Քրեական իրավունք և դատավարություն" մագիստրոսական ծրագիրը պահանջված է ինչպես հիմնական իրավաբանական կրթություն ունեցողների, այնպես էլ հիմնական իրավաբանական կրթություն չունեցող ուսանողների շրջանում:

Հանցագործության ներկա վիճակն ու դինամիկան, հասարակական հարաբերությունների զարգացումը, ինչը ուղղակի կերպով ազդում է հանցավորության նոր տեսակների առաջացման, հանցավոր գործունեության ձևերի և մեթոդների կատարելագործման վրա, անհրաժեշտ է դարձնում դատական համակարգի, իրավապահ մարմինների, փաստաբանների պատշաճ ապահովումը որակյալ կադրերով, որոնք ունակ են մասնագիտական գործունեություն իրականացնել հանցագործության կանխարգելման և պետությունում օրենքի գերակայության պահպանման ուղղությամբ: